II

ԴՐՎԱԳՆԵՐ ԲԱԳԱՎԱՆԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Պատմ. գիտ. դոկտոր Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կեսարիայից ձեռնագրություն առած տուն վերագառնալիս, Ագաթանգեղոսի տեղեկությամբ, Գրիգոր Լուսավորիչը հասնում է Եփրատ գետից ոչ հեռու մի ձորակ՝ «իրրև ձիոյ արշաւանօք երկուք», ուր և նախախնամության թելադրությամբ հաստատում է «տեղի բնակութեան» ս. Հովհաննես Մկրտչի և ս. Աթանագինեսի նշխարների: Այստեղ Գրիգորի կոչմամբ հողմ է բարձրանում, որը և «հարթեաց, տապալեաց, ընկեց զամենայն չինուածս բագնացն», ապա հայոց լուսավորիչը «եգ անդ զհիմունս եկեղեցւոյն և ուղղեաց սեղան փառացն Քրիստոսի. զի նախ անդ արար սկիզբն չինելոյ եկեղեցեաց» (Ագաթ., § 811–814): Գրիգորը նախ իր ուղեկից մեծամեծ նախարարներին է մկրտում, ապա «զգաւառականսն, զբնակիչս երկրին» և հրամայում է տեղում ամեն տարի Սահմի յոթին տոնախմբություն կատարել՝ ի հիշատակ Հովհաննես և Աթանագինես սրբերի: Եղելությանը տեղեկացած Տրդատը իր զորքով ու ընտանիքով գալիս է «ի քաղաքագեօղն Բագաւան, որ անուանեալ կոչի ի պարթեարէն լեզուէն Դիցաւան» և աշխարհակույտ ամբոխի հետ «առ ափն Եփրատ գետոյն» մկրտություն առնում (Ագաթ. § 817–819)[1]:

Ըստ այսմ՝ Բագավանի Ս. Հովհաննես եկեղեցին, որի մասին հին ու նոր բազմաթիվ հիշատակություններ կան, Հայոց երկրում հաստատված առաջին պաշտամունքային կառույցներից մեկն է[2]: Ագաթանգեղոսի մոտ այն կոչված է վկայարան, մատուռ, եկեղեցի *(Ագաթ. § 810–819): Ինքնին հասկանալի է, որ խոսքը VII դարում կառուցված եկեղեցու տեղում կամ նրա մերձավորությամբ եղած չինության մասին է[3]: Դատելով Ղազար*

---

1 *Հմմտ.* Н. М а р р. Крещение армян, грузин, абхазов и аланов св. Григорием. СПб., 1905, с. 133-135.

2 *Տեղանքի նկարագրությունն ու տեղեկությունների վկայակոչությունը տե՛ս* Ղ. Ա լ ի շ ա ն. *Այրարատ. Վենետիկ, 1890, էջ 527–535: Նաև՝* Ս. Հ ա յ կ ո ւ ն ի. *Բագրևանդ ջրաբաշխ գավառ. հ. Ա, Վաղարշապատ, 1894, էջ 277–283:*

3 *Թուրքերեն* Ուչքիլիսե *անունը եթե եռախորան լինելու արժագանք չէ, ապա վկայություն է երբևէ երեք եկեղեցու համաժամանակյա գոյության:*

Փարպեցու երկում եղած հիշատակություններից («մատուռն առաքելանման նահատակին սրբոյն Գրիգորի», «տեղի նահատակին Գրիգորի»)[4], կարելի է եզրակացնել, թե «երեք եկեղեցիներից» (թե՞ խորաններից) մեկն էլ Լուսավորչի սլաշտամունքին է նվիրված եղել: Պահպանվածն ու բազում առումներով ուշագրավը, սակայն, VII դարի եկեղեցին է, որի նկարագրությանն ու վիմագրերի վերծանման-հրատարակմանն է նվիրված Հ. Օրբելու երկու աշխատությունը[5]: Գիտնականն իր կատարած չափագրությունն ու գնահատությունը վերջնական չի համարում և հույս ունի այդ կատարված տեսնել «մոտ ապագայում»[6]:



Բագավանի եկեղեցու հատակագիծը

Սակայն, հանգամանքների բերումով, Հ. Օրբելու հրապարակումը վերջինը եղավ ու առավել ամփոփը: Հարկավ, ոչ պատահականորեն, գիտնականը Բագավանի եկեղեցին համարում է «միանգամայն բացառիկ հուշարձան», որն ունի 46 մ երկարություն, 27 մ լայնություն և 20 մ-բարձրություն, ավագ խորանից ավանդատների վրա բարձրացող գաղտնուղիներ, տարբեր հարթություններ ունեցող և պաշտպանական նպատակների հարմարեցված տանիք և մանավանդ ըստ բյուղանդական Հերակլ կայսեր տարիների և Հայոց ՁԸ (88) թ. թվագրված շինարարական արձանագրություններ: Ի դեպ, հենց Բագավանի 639 թ. այդ վիմագրերի գոյության փաստը Հ. Օրբելուն հարկադրեց վերանայել նախորդ հոդվածներում արտահայտած այն համոզմունքը, թե Հայոց մեծ թվական բովանդակող VII-VIII դդ. վիմական ու

4 Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի. Պատմութիւն Հայոց..., աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Սա. Մալխասեան. Տփղիս, 1904, էջ 139, 141:

5 И. А. О р б е л и. Багаванская надпись 639 г. и другие армянские ктиторские надписи VII века. СПб., 1913 (*վերահրատ. տե՛ս* И. А. О р б е л и. Избранные труды. Ереван, 1963, с. 371-397), *Նույնի՝* Багаванский храм и его надписи. СПб., 1917, (*վերահրատ. տե՛ս* И. А. О р б е л и. Указ. соч., с. 455-468).

6 И. А. О р б е л и. Избранные труды, с. 456, прим. 5.

պատմողական աղբյուրները ավելի ուշ շրջանի ընդօրինակություններ են կամ ընդմիջարկումներ[7]*:*

Հ. Օրբելուն հիմնականում զբաղեցրել է այն դրականությունը, ուր Բագավանի արձանագրության վերծանության փորձ կա, որպիսին են Հ. Շահխաթունյանցի, Ժ. Բարթուղիմեոսի, Մ. Բրոսեի, Ղ. Ալիշանի աշխատությունները[8]*: Պարզվում է, սակայն, որ ոչ պակաս կարևոր դիտարկումներ ու հաղորդումներ կան գիտնականին անծանոթ մնացած կամ նրա կողմից ուշադրության չառնված ուղեգրական-տեղագրական այլ աղբյուրներում ևս: Մասնավորապես այդպիսին է Բարունակ Ֆերուհխանի «Ճանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան յամի տեառն 1847» գիրքը*[9]*: Հեղինակը բժշկի պարտականությամբ ուղեկցել է Աբդուլ Մեճիտի հրամանով կայսրության զանազան կուսակալություններ այցելության ելած «երրորդ սենեկապետ Բազուպ Պէյին» և բավականաչափ հանգամանալի գրառումներ կատարել այցելած բնակավայրերի տեղանքի, բնակչության և կենցաղային այլևայլ իրողությունների վերաբերյալ: Տարիներ անց, բայց մինչև 1868 թ., նա իր գրառումները հարստացրել է «ստոյգ աղրիւրներէ» քաղված տեղեկություններով: Ինչ վերաբերում է մեզ հետաքրքրող Բագավան-Ուչքիլիսային, ապա Ֆերուհխանի հաղորդումները կատարելապես սեփական դիտարկումներ են: Ստորև բերում ենք այդ դրվագն ամբողջությամբ:*

«ԻԻՉ ՔԻԼԻՍԷ: Նպատ անուն երկնաբերձ լերին արևելեան հիւսիսային ստորոտը՝ Եփրատ գետին մօտ՝ Հայոց գիւղ մ՝ է 40 խրճիթներով: Ունի վանք մը և քարաշէն մեծ ու բարձր եկեղեցի մը յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի, հաստատեալ չորս միակտուր մարմարիոնէ ստուար սիւներու վրայ՝ որուն աւագ խորանի ձևը յունաց եկեղեւոյ նման է: Այս խորանին վրայ աւազանի պէս գաղտնի տեղ մը՝ երկու մեծ արկղ՝ մագաղաթի վրայ գրուած նախնեաց ձեռագիր ընտիր մատեաններ կային, որ անտարակոյս ազգային գրականութեան ու պատմութեան հազուագիւտ գանձեր կը պարունակէին, բայց ափսոս որ անուսումն ու անոպայ վանականաց կոյր համոզմամբը այնպէս խաւարամած ու բանտարկեալ կը մնան և օր մը ժամանակին բռնութեամբը պիտի փտտին ու անհետանան: Այս պատուական մատեանները ձեռք անցընել անհնար ըլլալով, գոհ եղայ միայն զանոնք տեսնելով հետաքրքրութիւնս յագեցուցել. ուստի կանչեցի վանահայրն ու միաբանները, և 20 ոտնեայ սանդուխ մը բերել տալով մտանք եկեղեցին ու ելանք այն անգին մատենադարանը. շատը պատմութեան վերաբերեալ գրքեր, որոնց վրայ հազիւ աչք մը նետելու ատեն ունեցայ. արդէն գրեթէ բռնութեամբ ելած էի, և ընդհուպ վար իջնել

---

7 *Տե՛ս նույն տեղում, էջ 456, ծան. 1: Հմմտ.* П. М. М у р а д я н. Хронология систем летосчисления по армянским источникам. "Армянская эра".-Вестник обществ. наук АН АрмССР, 1976, N 1, с. 49-64.

8 *Հղումները տե՛ս* И. А. О р б е л и. Избранные труды, с. 372-373.

9 *Լույս է տեսել Արմաշի վանքի տպարանում 1876 թ.:*

պարտաւորեցայ. բոլոր ճիգս այն գրքերը առնելու կամ մէկ ցանկը հանելու համար անօգուտ եղաւ: Գիւղին մէջ սօսիի և ուրիշ տեսակ ծառեր կը գտնուէին. գիւղը թէ-պէտ Եփրատի մօտ է, բայց յատուկ առու մ'ալ բերուած էր մինչև հոն: Այս գիւղին տեղն էր Բագաւան, չաստուածոց ու հանդիսից պաշտաման տեղին, ուր Լուսաւորիչ մկրտեց մեր Տրդատ թագաւորն՝ իր աշխարհագումար բիւրաւոր զօրքերովը մէկտեղ, ու կառոյց եկեղեցի մը յանուն Ս. Կարապետի, որուն վրայ վերջը Քրիստոսի 624 թուականին շինեցաւ արդի հրաշակառոյց տաճարը Հերակլես կայսեր օժանդակութեամբ. այն է որ Իւլ Քիլիսէ կանուանի:

Վանքին արևելեան կողմը՝ քառորդ մը հեռի է Հայոց՝ Եփրատի մէջ մկրտութեան տեղը, որուն եզերքի քարաժայռերուն վրայ շատ մը խաչադրոշմ փորուածներ կան մինչև հիմա:

Նպատ լերան գագաթին վրայ մեծին Ներսիսի մատուռներն ու աղօթատեղիները կան, ուր երանելին աղօթքի կայնած՝ լերան առջևի Ձիրաւ դաշտին մէջ Պարսիկներու հետ Հայոց ըրած պատերազմն ու յաղթութիւնը կը դիտէր»[10]:

Որ վանահայրն ու միաբանությունը ջանացել են կողմնակի աչքից հեռու պահել թաքստոց-մատենադարանում պահվող ձեռագրերը՝ ակնհայտ է թե՛ Ֆերուհխանի բառացի վկայությունից և թե՛ մանավանդ՝ Բագավանի եկեղեցի այցելած, նույնիսկ նրա նկարագրությամբ զբաղված անձանց կատարյալ անտեղյակությունից: 1850-ական թթ. Ուչքիլիսա-Բագավանում է եղել և «ահեղ մեծութեան» եկեղեցին նկարագրել մխիթարյան հայր Ներսես Սարգիսյանը. նա գիտե, որ գմբեթ պահող սյուները սնամեջ են «և ելանելիք ի նոսին և սենեակք, և ի սենեկացն դարձեալ այլովք սանգղօք յայլ սենեակս մինչև ցտանիսն, առ հասարակ քարաշէնք»[11]: Միաբանության չորս-հինգ անդամներից ոչ մեկը հայոց ձեռագրական արժեքներին այնքան նախանձախնդիր մխիթարյան գիտնականին չի հուշել գաղտնարանի սնդուկների պարունակության մասին: Կարելի է մտածել, թե միաբանները կաթոլիկ ազգակցի առաջ սրտաբաց լինելուց զգուշացել են, բայց 1882 թ. Բագավան պաշտոնական եկեղեցական հանձնարարությամբ եկած Մաղաքիա եպս. Օրմանյանը ևս ձեռագրերի սնդուկների մասին տեղեկություն չունի, թեև վանահայր Հովհ. վրդ. Աստվածատրյանի մասին նպաստավոր է

---

10 Բ ա ր ո ւ ն ա կ Պ է յ Ֆ ե ր ո ւ հ խ ա ն. Նշվ. աշխ., էջ 160–162: 624 թ. գոտևորող արձանագրության սկզբում հետագայում փորագրված ՁԳ գրերի վերծանության արդյունք է (83+551):

11 Ն ե ր ս ե ս Ս ա ր գ ի ս ե ա ն. Տեղագրութիւնք ի Փոքր և Մեծ Հայս. Վենետիկ, 1864, էջ 221: Բագավանի եկեղեցու վերաբերյալ տե՛ս նաև Պ ո ղ ո ս Մ ո ւ ր ա տ ե ա ն ց. Նկարագիր Ս. Հովհաննու վանուց.—«Արարատ», 1889, էջ 34–41, 108–116, 139–153, 194–212, 263–278, 308–321:

արտահայտվում[12]*: Տեղեկություններ չունեն նաև Բաղավանի մասին խոսող եվրոպացի հեղինակները*[13]*:*

Բաղավանի ձեռագրական հավաքածոյի մասին մի վերջին տեղեկություն գտնում ենք Ս. Հայկունու «Բագրեանդ ջրարաշխ գաւառ» աշխատության էջերում.

«Այս հոչակաւոր վանքը ունէր ընտիր ձեռագրաց մատենադարան, որ պահուած էր վանքի որմերու մէջէն սանդուխներով դէպի գմբէթ բարձրացած մի դարանի մէջ. այս ձեռագիրներ ամբողջովին 77-ի պատերազմին վանքի մէջ թողուած են և ի կորուստ մատնուած: Մի ամենաընտիր ձեռագիր՝ մագաղաթեայ Աստուածաշունչ քրդերու ձեռք կանցնի, կը բերեն Ղարաբեկ հայ գիւղն, կը դնեն վայր ու փայտով հարուածներ կտան ձեռագրին, որպէսզի հայեր մեծ գին տան, գերությունից ազատեն. կողոպտուած հայեր աստի անտի ցորեն հաւաքելով կտան, կը ստանան Աստուածաշունչն»[14]:

Դժվար է ասել՝ «ի կորուստ մատնուած» ասելով 1877 – 1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ տեղի ունեցած այրում - ոչնչացում պիտի հասկանալ, թե՞, ինչպես ընդունված է կոչել՝ գերեվարում: Թերևս նույն հավաքածոյի մաս կազմած Աստվածաշնչի վերորերյալ պատմությունը կարող է սնդուկներում եղածի ճակատագրի ապացույց ներկայանալ: Կա և մեկ այլ պարադա. նույն Ս. Հայկունին հրատարակել է 1860 թ. հունիսի 21 թվագրություն ունեցող «Ցուցակ գրոց հնոց և նորոց ձեռագրաց և տպագրաց վանից Իւչքիլիսայ Բագրեանդայ»[15]*: Այստեղ ի շարս այլ երկերի եղել են Եզնիկ (3 օրինակ), Խորենացի (4 օրինակ), Եղիշե (6 օրինակ), Զենոբ (2 օրինակ), Տարոնացի (2 օրինակ): Լրացուցիչ տեղեկությունների պակասը մեզ հնարավորություն չի տալիս ճշտելու, թե հիշյալ*

---

12 *Մ ա ղ ա ք ի ա ա ր ք ե պ. Օ ր մ ա ն յ ա ն. Խոհք և խոսք. Երուսաղեմ, 1929, էջ 117, 133· Թեմական առաջնորդ և վանահայր Հովհ. վրդ. Աստվածատրյանը, Օրմանյանի գնահատությամբ, «Բազմաչխատ և բազմաչարչար խնամակալ եղած էր իւր վիճակին՝ վերջին պատերազմին և սովին միջոցներուն գերութեան և մահուան երկիւղ կրելով, և սովեալները կերակրելու համար մինչև ժամացույցը վաճառելու հասնելով» (նշվ. աշխ., էջ 133–134):*

13 *Տե՛ս, օրինակ, Էլիզե Ռեկլյուի «Լազիստան, Հայաստան և Քուրդիստան» գիրքը, որից գրվագներ է թարգմանել ու ծանոթագրել Գալուստ Տեր-Մկրտչյանը (տե՛ս նրա «Հայագիտական ուսումնասիրություններ», գիրք Բ, աշխատասիրությամբ պրոֆ. Պ. Հ. Հակոբյանի. Երևան, 1998, էջ 401): Ուչքիլիսե է այցելել նաև գերմանացի վիմագրագետ Վոլֆգեմար Բելքը, սակայն նա ևս ձեռագրեր չի հիշատակում (տե՛ս Գ. Տ ե ր-Մ կ ր տ չ յ ա ն. նշվ. աշխ., էջ 408–409):*

14 *Ս. Հ ա յ կ ո ւ ն ի. նշվ. աշխ., էջ 277: Շահե արքեպ. Աճեմյանի խմբագրած «Ցուցակ Աստուածաշունչ մատեանի հայերէն ձեռագիրներուն» (Լիզպոն, 1992) գրքում չկարողացանք Ղայբեկ գյուղում փրկված այս ձեռագրի նկարագրություն գտնել. ճանաչելու համար մեր ունեցած տեղեկությունները խիստ սահմանափակ են:*

15 *Ս. Հ ա յ կ ո ւ ն ի. նշվ. աշխ., էջ 281–283:*

հեղինակներից որը տպագիր է եղել, որը՝ ձեռագիր[16]: Ամենևին բացառված չէ, որ Ֆերուհխանի տեսած «մագաղաթի վրայ գրուած նախնեաց ձեռագիր ընտիր մատեանները» գեթ մասամբ ներկայացված են 1860-ին կազմած ցանկում: Մ. Օրմանյանը սովն ու պատերազմական արհավիրքը հիշատակում է, ձեռագրերի կորուստը՝ ոչ: Սակայն կորուստի մասին չխոսելը պահպանված լինելու երաշխիք չէ: Հավանաբար թաքստոցներում պիտի գտնվեին «Շարժական ու անշարժ կայից» ցանկում ներկայացված ոսկեջուր և արծաթե առարկաները, որոնք նույնպես կորստի են մատնվել:

Թվում է, պարագաները վերջնականապես պարզ պիտի դառնային 1912 թ., երբ հատկապես Բագավանի եկեղեցին ու նրա արձանագրությունները ուսումնասիրելու համար Ն. Մառը այստեղ էր գործուղել Հ. Օրբելուն: Բայց, ինչպես արդեն ասվեց, երիտասարդ Հ. Օրբելին հիմնականում զբաղվել է տեղիս վիմագրերի, մանավանդ գոտևորող չինարարական արձանագրության վերծանման ոչ դյուրին աշխատանքով: Ավանդատների վերնահարկում եղած սենյակներն ու այնտեղ տանող ուղիները նկարագրելուց հետո, Հ. Օրբելին շարունակում է. «Բացի այս փոքրիկ սենյակներից, եկեղեցու պահակի խոսքերի համաձայն, գոյություն ունի նաև ինչ-որ մի դժվար մատչելի գաղտնարան, բայց թե հատկապես որտեղ՝ նա չկարողացավ ինձ բացատրել»[17]: Խոսքը, անշուշտ, Ֆերուհխանի տեսած գաղտնարանի մասին է, սակայն բացատրության կարոտ է պահակի անտեղյակությունը՝ միաբանությունը շարունակում էր թաքո՞ւն պահել գաղտնարանը (ուրեմն նրանում պահած արժեքներ կային), թե՞ ժամանակի ընթացքում (1878 թ. հետո) այն այլևս մոռացության էր տրված (նրանում այլևս թաքցնելիք չունենալու հետևանքով)[18]:

Ձեռագրական հավաքածոների պատմությանը վերաբերող գրականության մեջ մեզ չհաջողվեց Բագավանի սնգուկների բովանդակությանը և նրանց իրական ճակատագրին վերաբերող ստուգելի տեղեկություն գտնել[19] և այնուամենայնիվ՝ «ընտիր մատեանների» հետագիծը ընդմիշտ կորած չպիտի նկատել: Հարցը պարզելու համար հայագիտության գործագ-

---

16 Օ. Եգանյանը 1971 թ. հրատարակած մի հոդվածում խոստանում է Բագավանի այդ գրացանկին անդրադառնալ առանձին ուսումնասիրությամբ (տե՛ս «Էջմիածին», 1971, հունիս-հուլիս, էջ 84), բայց չկարողացանք ճշտել՝ նման հրատարակում կատարել է, թե ոչ:

17 И. А. Орбели. Указ. соч., с. 462.

18 Ս. Էփրիկյանի տեղեկությամբ «1877-ի պատերազմի ժամանակ վանքս ձեռագիրները գետնի տակ թաղելով ի կորուստ մատնուած են: Այժմ ունի ձեռագիր և տպագիր ընդամենը 250 կտոր գիրք» (Բնաշխարհիկ բառարան, Ա, Վենետիկ, 1902, էջ 344):

19 Նկատի ունենք Աս. Մնացականյանի, Օ. Եգանյանի, Ս. Քոլանջյանի և Բ. Քուլիի համապատասխան աշխատությունները:

բած ջանքերը (նկատի ունենք չքացած այլ հավաքածոները ևս) ամենևին բավարար չեն[20]:

Բագավանի տաճարին վերաբերող դրականությունից մեզ ծանոթ վերջին տեղեկությունը Համբարձում Առաքելյանի գրառումն է՝ կատարված 1915 թ. հուլիսի 10-ին, Հ. Օրբելու այցելությունից երեք տարի անց: Արժե այդ վերջին տեղեկությունը բերել ամբողջությամբ. «Ցերեկվա ժամը 11-ին մոտեցանք այն գեղեցիկ կամուրջին, որ ձգված է Սրածանիի վրա և որի վրայով պետք է անցնել գնալու Ուչ-Քիլիսե հայ գյուղը, ուր գտնվում է հռչակավոր Ս. Հովհաննես վանքը՝ շինված հեթանոսական Բագավանի տեղում, կամ գուցե վերածված վանքի...

Կես ժամից հետո մենք, քայլելով, գետի ափով, հասանք գյուղը, որ առաջ բաղկացած է եղել 30–40 տնից, և ուր այժմ միայն 5–10 տուն կա, այն ևս նոր վերագարձած: Գյուղը, թյուրքական հարձակման վախից, գաղթել է և միայն նորերս է մի քանի տուն վերադարձել: Բայց մենք շտապում ենք այցելել վանքը, որ նույնպես ամայի էր մնացել, թափուր որևէ կրոնավորից, լքված և այժմ դարձած բնակարան չորքոտանիների համար:

Ստուած իմ, ես չեմ կարող նկարագրել այն սքանչելի, բայց և տխուր տպավորությունը, որ կրեցի ի տես այդ վանքի: Ես վանքեր շատ եմ տեսել, բայց Ուչքիլիսեի Ս. Հովհաննեսի նման հոյակապ վանք դեռ չէի տեսել: Ես մի բոպե կարծեցի, թե Ս. Սոֆիայի տաճարի կամարների տակ եմ գտնվում: Երկու, երեք էջմիածին կարող է պարփակվել այդ վանքի մեջ. այնքան նա ընդարձակ, հոյակապ է կլորակ գմբեթը, որ երկնակամարն է հիշեցնում, շինված է առանց սյուների վրա հանգչելու, ճիշտ այնպես, ինչպես Ս. Սոֆիայի տաճարը Բյուզանդիոնում. Ալիշանը անվանում է այս վանքը «Հրաշակառույց» և բնավ չի սխալվում. այդպիսի հրաշալի, սքանչելի ճարտարապետություն մեր վանքերից շատ քիչերն ունեն: Պատմության համաձայն, այստեղ եղել է հեթանոսական մեծ մեհյան, որ Լուսավորիչը կործանեց և նրա տեղ շինեց մի փոքր եկեղեցի, և ահա այդ փոքր դրիգորաշեն եկեղեցու վրա Բյուզանդիոնի Հերակլ կայսրը 634–9 թ. կանգնեցրեց ներկա հոյակապ տաճարը, երեք սեղաններով (ուստի և կոչվեց թյուրքերից Ուչքիլիսե՝ երեք եկեղեցի): Այստեղ XIX դարի սկզբին Դանիել կաթողիկոսը օծվեց կաթողիկոս: Բայց, ավա՜ղ, այդ հոյակապ վանքը, որ դեռ շատ լավ մնացել է, այսօր դարձել է բուերի և ոչխարների բնակարան.

---

20 Միջագյուղի հավաքածոյի հետ կատարվածը անակնկալի հնարավորության մատնացուցելի օրինակ է:

նա ևս ողբում է Հայաստանի անհետացումը և հայերի թշվառությունը: Նրա հոյակապ գմբեթի գագաթից լաց է լինում տանջված Հայաստանը»[21]:

Նույն գրքում տպագրված է նաև Շիրվանզադեի «Պատերազմի վայրերում» հուշագրությունը: Նա ևս եղել է Ուչքիլիսայում, այցելել Ս. Հովհաննես. «Ոմանք մեզնից կամեցան այցելել Սուրբ Հովհաննու վանքը, որ գտնվում էր Ուչքիլիսայում, մի վերստ հեռու: Ասում են, որ այդ վանքում մի ժամանակ կաթողիկոսներ են օծվել: Հետաքրքրականն ինձ համար նրա ճարտարապետությունն էր: Դժբախտաբար, այն էլ մի բանի նման չէ: Եթե չափը որևէ արժեք ունի, կասեմ, որ հազիվ թե նրա մեծությունն ունենա մեր վանքերից որևէ մեկը – 59 քայլ երկայնություն և 33 քայլ լայնություն: Շրջապատված է վանքը բազմաթիվ քարաշեն սենյակներով, որոնք, սակայն, հիմնովին ավերված են: Երբ ներս մտանք, աղավնիների մի երամ թռավ մեր գլխի վրայով և թառեց վիթխարի, բայց տձև գմբեթի տակ: Սալահատակը, պատերը, նույնիսկ սեղանը ծածկված էին նրանց կղկղանքով: Երկու ահագին խորաններ ծառայում էին իբրև մթերանոց և լի էին ալյուրով, ցորենով, գարիով: Սեղանը կողոպտված էր և կիսախարխուլ: Ահագին քարերը գուրս էին ցցվել պատերի միջից պառավի ատամների պես և սպառնում էին ընկնել»[22]: Շիրվանզադեի այս գնահատությանը կառույցը ճանաչելու վկայություն չի բովանդակում: Նրա հուշագրությունից անբավական է եղել նաև ուղևորության մասնակից Հովհ. Թումանյանը[23]: Վերջինիս ծոցատետրային անտիպ գրառումներում Բագավանի վերաբերյալ ասված է. «...Մտանք ս. Հովհաննէս: Համիդիէն նահանջելիս կողոպտել են վանքը, գրքերը կրակել, ձիանքը մեջը կապել, միւս օրը փախել» (ԳԱԹ, Հովհ. Թումանյանի ֆոնդ, N 258, էջ 41 բ): Վերջին տարիներին Բագավանի տարածք այցելած մարգկանցից տեղեկացանք, թե Արմաշի վանքի պես ճարտարապետական այդ եզակի կառույցի տեղում քար իսկ չի մնացել:

---

21 Հ [ա մ բ ա ր ձ ո ւ մ] Ա [ռ ա ք ե լ յ ա ն]. Տանջված Հայաստան. ուղևորություն թյուրքաց Հայաստանում.–Զիթենի, Թիֆլիս, 1915, էջ 517–518:

22 Զիթենի, էջ 52:

23 Տե՛ս Լ ո ւ ս ի կ Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը. Երևան, 1992, էջ 135:

ФРАГМЕНТЫ ИЗ ИСТОРИИ СОБРАНИЯ РУКОПИСЕЙ ХРАМА В БАГАВАНЕ

Доктор истор. наук П. М. МУРАДЯН

Резюме

Багаван – обиталище языческих богов Древней Армении– в истории страны известен еще и тем, что, по сообщениям армянских первоисточников, царь Тиридат и вельможи встретили здесь возвращающегося из кесарийского рукоположения Григория Просветителя. При императоре Ираклии на месте основанного Григорием мартирия был сооружен храм св. Предтечи, о чем рассказывает обстоятельная строительная надпись от 639 г. Исследованием этого исключительно оригинального архитектурного сооружения и публикацией имеющихся здесь памятников эпиграфики в 1912 г. занимался И. А. Орбели. Он же отметил, что над алтарным возвышением и приделами "помимо ... комнаток, по словам церковного сторожа, имеется еще какой-то малодоступный тайник, но где именно, он не смог мне объяснить". Изучение путевых записей посетивших храм в XIX в. деятелей позволило выявить ряд интересных сообщений, в частности, о тайнике и имеющихся в нем древностях. Побывавший здесь в 1847 г. Барунак Ферухан (врач из Константинополя) нашел два больших ящика, содержащих пергаменные экземпляры сочинений армянских историографов. Сохранился реестр древностей храма, составленный в 1860 г. По разным источникам удалось установить, что основная часть древностей была расхищена или уничтожена в период русско-турецкой войны 1877–1878 гг. Посетившие храм А. Аракелян и Ширванзаде нашли его покинутым монахами и разоренным в годы Первой мировой войны.